ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 619

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

27 հոկտեմբեր 2011թ.

ՔԱՂ. ՍՈՒՐԵՆ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 92/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Սուրեն Անուշավանի Ղարաքեշիշյանը՝ Հակոբջանյան փողոցի թիվ 92 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասին հարակից տարածքում կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 92 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասին հարակից տարածքում կառուցվել է բնակելի տուն դեռևս 1980-ական թվականներին, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 379.0քմ հողամաս /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/, որի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Սուրեն Ղարաքեշիշյանի կողմից կառուցված բնակելի տանը և 379.0քմ հողամասին տրամադրել հասցե՝ Հակոբջանյան փողոց թիվ 92/1:
2. Հակոբջանյան փողոցի թիվ 92/1 հասցեի բնակելի տունը և 379.0քմ հողամասը համարել քաղ. Սուրեն Անուշավանի Ղարաքեշիշյանի /ծնված 03.05.1968թ./ սեփականությունը:
3. Պարտավորեցնել քաղ. Ս.Ղարաքեշիշյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 620

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

27 հոկտեմբեր 2011թ.

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 92 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 55.0ՔՄ /ՄԻՆՉԵՎ 20%/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԻԴԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ, ԱԼԲԵՐՏ ԵՎ ՍՈՒՐԵՆ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. հոկտեմբերի 25-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և 2011թ. հոկտեմբերի 25-ի սեփականության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 92 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Աիդա Թադևոսյանը, Ալբերտ և Սուրեն Ղարաքեշիշյանները: Վերջիններս դիմել են Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի օրինական սահմանների ճշտման խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, Հակոբջանյան փողոցի թիվ 92 հասցեի տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 600.0քմ: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից քաղաքացու կողմից փաստացի ավել օգտագործվում է 55.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացու սեփականության իրավունքը (600.0քմ X մինչև 20%): /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջան համայնքում իրականացվող առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 92 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 55.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղաքացիներ Աիդա Թադևոսյանի, Ալբերտ և Սուրեն Ղարաքեշիշյանների սեփականության իրավունքը: Այսպիսով, Հակոբջանյան փողոցի թիվ 92 հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 655.0քմ /600.0քմ+55.0քմ/մինչև 20%/:
2. Պարտավորեցնել սեփականատերերին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ